ՀՈՂԻ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ

Ըստ ԳԼԷԲ ՈՒՍՊԵՆՍԿՈՒ

ԵՐԻԱՆԴ ՂԱԶԱՐԵԱՆԻ

I

Ռուս երևելի ժողովրդագէտ Գլէբ Ուսպէնսկին, իւր նշանաւոր շարադրութեան մէջ՝ Власть земли, գիւղացու բնաւորութիւնը, նորա բարոյական հասկացողութիւնները և զգացմունքները կապում է հողի հետ, հողի ազդեցութեան, «իշխանութեան» հետ։ Գիւղացու ամբողջ կեանքը կլանուած է երկրագործական աշխատանքով. նա իւր կեանքի նպատակը, իւր կեանքի ամենաբարձր երջանկութիւնը գտնում է այդ աշխատանքի, այդ երկրագործութեան մէջ։ «Ալպէսով—ասում է Ուսպէնսկի—երկրագործ գիւղացու ամեն մի քայլը, ամեն մի մտածմունքը կախուած է հողից։ նա ամբողջովին գերի է այդ հողի, այդ կանաչ խոտի ձեռքում։ Նորա համար այնքան դժուար, այնքան ծանր է հողի իշխանութիւնից ազատելը, հողի ցոյց տուած ճանապարհից չեղուելը, որ երբ գիւղացուն հարցնում են թէ՝ որն ես ուզում՝ ձեռ ուտել, թէ բանտը նստել,—նա անչուշտ կը նախադասէ ձեռ ուտելը, որպէս զի շուտով ազատուի, շուտով դնա իւր գործին, եթէ ոչ նրա տէրը և իշխանը՝—հողը, նրան չի սպասիլ՝ հարկաւոր է քաղել, հարկաւոր է անասուններին խոտ պատրաստել. իսկ այդ անասունները «հարկաւոր են» երկրին, հողին։ Գտանելով հողի մշտական ազդեցութեան տակ, տանելով հողի մշտական ազդեցութիւնը, տանելով իւր ուսերի վրայ հողի բազմաթիւ պիտոյքները, բազմաթիւ նեղութիւնները և հոգսերը, գիւղացին զգում է, որ ինքը մենակ, ինքնուրոյն կերպով անկարող կը լինէր կատարել այդ ամենը՝ եթէ նրան իւրաքանչիւր բոպէ չը հրամայէր հողը, իւրաքանչիւր վայրկեան չիշխէր, չը կառավարէր նրա բոլոր գործերը և մտածմունքները։ Հողի մշտական իշխանութիւնը և ճնշումը անհամեմատ թեթևացնում է երկրագործի համար նորա աշխատանքը և

այդ պատճառով երկրագործ գիւղացին ամենայն իրաւամբ կարող է ասել՝ որ նրան «սիրում է մայր հողը»։

Ահա այդ հողի «իշխանութիւնը», որ գիւղացու բնրանում փոխւում է «սէր» խօսքի։ հողի այդ ճակատագրական աղդեցութիւնը կազմակերպում է միլիոնաւոր մարդոց՝ երկրագործ ամբոխի բարոյական աշխարհը, նրա հոգեկան կեանքը, նրա մտածելու, զգալու բոլոր կարողութիւնները։ Երկրագործ գիւղացիների ամբողջ կեանքը, նրանց թէ ընտանեկան և թէ հասարակական բոլոր կենցաղ և բարդ յարաբերութիւնները հողի աղդեցութեան տակ՝ ստանում են որոշ գոյն, որոշ բնաւորութիւն. Երկրագործական պարապմունքը, հողի և առհասարակ բնութեան ոյժերի հետ ունեցած մշտական մոտիկ, անմիջական յարաբերութիւնը տալիս է գիւղացու հոգեկան ոյժերին, ընդունակութիւններին մի առանձին, որոշ, սպեցիֆիկական յատկութիւն, որով նա, այդ գիւղացին, բաժանւում, դատւում է հասարակական միւս դասակարգերից՝ վաճառականներից, արհեստաւորներից, չինովնիկներից և ինտելիգենցիայից։

Ինչումն է կայանում գիւղացու բնաւորութեան այդ առանձին աչքի ընկնող յատկութիւնը, ինչ հոգեբանական փոփոխութիւն է մտցնում հողի իշխանութիւնը գիւղացու ներքին բարոյական աշխարհում։

II

Գլէբ Ուսպենսկին, որ այնքան սիրով ու հմտութեամբ ուսումնասիրում է ռուս ժողովրդի կեանքը, նորա հոգեկան աշխարհը, որ այնպիսի մեծ հանճարով լուսաւորում, պարզում է մեր առաջ ժողովրդի ստորին խաւերի մութ անկիւնները—այս խնդրում նոյնպէս իւր սովորական գիտելու, ուսումնասիրելու եղանակով՝ կարողանում է ճիշդ և հասկանալի եզրակացութիւններ տալ մեզ։ Նորա ամբողջ շարադրութեան (Власть земли) գլխաւոր նպատակն է պարզել թէ այդ ինչ անհասկանալի և անըմբռնելի «ոյժ» է, որ ռուս ժողովրդականները զգում են իրանց գիւղացու մէջ, այդ ինչ ներքին հոգեկան մեծ կարողութիւն է, որ պաշտպանել է ռուս գիւղացուն պատմական շատ փոթորիկների աղդեցութիւնից, որ աղատել է նրան թաթարների օրդաներից և գերմանական բիւրոկրատիայից։ Ռուս ժողովրդականների կարծիքով՝ այդ «ոյժը», այդ առանձին հոգեկան կորովը, որ նկատւում է իրանց երկրագործ մուժիկների մէջ, մի այնպիսի առանձնաշնորհութիւն է, որով կարող է պարծենալ միայն ռուս գիւղացին, և որ կազմում է ռուս գիւղացու միակ յատկանիշ սեպհականութիւնը։ Նրանք ոգևորում, հիանում էին իրանց ժողովրդի այդ հոգեկան մեծ հարստութիւնով, նրանք երկրպագում էին այդ «ներքին», «անհասկանալի» «աստուածային» ոյժի առաջ, որ նրանց կարծիքով, հիմքն է ռուսաց կեանքի յառաջադիմութեան, որ տանելու է ռուսներին դէպի լուսաւորու-

թեան և լառաջադիմութեան աւետեաց երկիրը»... Սակայն ափսոս, որ այդ անկեղծ ժողովրդասէր մարդիկ բաւականանում էին միայն անորոշ խօսքերով և բացականչութիւններով, նրանք գիտէին լոկ ողևորուել, ոգևորուել վերացական, անհասկանալի ենթադրութիւններով... Դէպի Ուսպէնսկի, որ թէ անկեղծութեան և թէ նոյն իսկ ողևորութեան կողմից ոչինչով պակաս չէ այդ վերոյիշեալ ժողովրդասէրներից,—ունի նաև մեծ տրնտեսական գիտութիւն, դիտող, ուսումնասիրող խելք և խորը թափանցող, դրական տաղանդ։ Շնորհիւ այս անձնական լատկութիւնների՝ նա կարողացաւ այդ հարցին տալ խելացի և ճիշտ բացատրութիւն։ Ուսպէնսկու ամենադլխաւոր և անհերքելի տեսակէտը այն է, որ ժողովրդին ճանաչելու, նրա հոգեկան աշխարհը ուսումնասիրելու համար՝ անհրաժեշտ է «մտնել այդ ժողովրդի կեանքը», թափանցել դիւղացու խրճիթի մէջ և այնտեղ տեսնել և զգալ նորա կեանքը իւր բոլոր հիմնական պարզութեամբ։ Հաւատարիմ մնալով իւր այս ընդունած տեսակէտին՝ նա իւր ամբողջ տաղանդը և դիտութիւնը ծառայեցրեց և ծառայեցնում է ժողովրդի կեանքի դրական ուսումնասիրութեանը, ամբողջ էութիւնով նա տրեցաւ ժողովրդին և իւր գրչի միակ և անհրաժեշտ նիւթը դարձրեց ռուս ժողովրդի կեանքը, նորա թէ ընտանեկան և թէ հասարակական բոլոր մանրամասն երևոյթները... Ապրելով ժողովրդի մէջ, շարունակ և անդադար դիտելով նորա կեանքը, նորա թէ հոգեկան և թէ տնտեսական հանգամանքներն ու երևոյթները՝ Ուսպէնսկին բազմաթիւ պատկերներով, բազմաթիւ մանր ու խոշոր լօդուածներով հեղեղում է ռուս լառաջադէմ մամուլը, որտեղ նա միշտ և անդադար խօսում, մտածում է գիւղացու մասին, նորա աշխատանքի, նորա ապրուստի մասին։ Իւր ամբողջ հոգով Ուսպէնսկին մտել է ժողովրդի կաշու մէջ, իւր ամբողջ տաղանդով նա աշխատում է լուսաւորել այդ ժողովրդի կեանքը, լուսաւորել ոչ թէ իրան, ժողովրդի համար, այլ ընթերցողների համար, հասարակութեան այն բարձր դասակարգի համար, որի աչքերից միշտ խուսափել, միշտ ծածկուել է ժողովուրդը, որի համար «դիւղացի», «ժողովուրդ», «մուժիկ» և այլ խօսքերը անորոշ, անլայտ և անբացատրելի հասկացողութիւններ էին ներկայացնում։ Ռուս ինտելիգէնցիան ապրելով Պետերբուրդում, շրջապատուած քաղաքակրթութեան բոլոր լարմարութիւններով՝ երբեմն հանդիսաւոր տօների և խնճոյքների ժամանակ, կամ թէ չէ հասարակական պիտոյքներով ողևորուած՝ սկսում էր արտասանել ժողովուրդ և մուժիկ խօսքերը, տալով այդ խօսքերին խորը, կարևոր նշանակութիւն։ Ռուս ինտելիգէնցիան այդ բարձր ողևորութեան րոպէներում սիրում էր մտաբերել այն «ոյժը», այն մեծ «տոկունութիւնը», որով գիւղացին տանում է կեանքի բոլոր նեղութիւնները և փորձանքները, որով ժողովուրդը «ապրում է» և պաշտպանում է մտքի և զգացմունքների մշտական թարմութիւնը... Բայց թէ ինչումն է կայանում այդ «ոյժը», այդ «տոկունութիւնը», ինչպէս է առաջացել նա ժողովրդի մէջ, ինչ պայմանով

և օրէնքներով պաշտպանւում է այդքան երկար պատմական ժամանակների ընթացքում—այդ մասին շատ քիչերն էին մտածում, այդ մասին աւելորդ էր համարւում անգամ մտածել...

Երկարատև ուսումնասիրութիւններից ու դիտողութիւններից յետոյ Ուսպէնսկին նոյնպէս համոզւեց, որ իրաւ ռուս ժողովրդի մէջ կայ մի ոյժ, կայ մի անպարտելի տոկունութիւն, որով այդ ժողովուրդը զանազանւում է միւս դասակարգերից, որով ռուս գիւղացին աննկարագրելի համբերութեամբ կրւում է բոլոր կենսական դառնութիւնների, բոլոր արգելքների ու անյաջողութիւնների դէմ։ Համոզւելով այդ բանում, Ուսպէնսկի չարունակեց իւր դիտողութիւնները, իւր տնտեսական և հոգեբանական ուսումնասիրութիւնները ժողովրդի մէջ՝ որպէս դի պարզ դաղափար կազմէ այդ «ոյժի» մասին և, որպէս զի «գտնի» նորա առաջանալու, զարգանալու, կազմակերպւելու պատճառները, օրէնքները։ Այս դիտողութիւնների մէջ նա բոլորովին նման է մի ուսումնական բնագէտի, որ դիտելով, նկատելով բնութեան մէջ մի երեոյթ, իսկոյն աշխատում է հասկանալ այդ երեոյթի էութիւնը, իսկոյն սկսում է քննել և բացատրել նրան առաջացնող բնական և ընդհանուր պատճառները։

III

Նախ մեզ անհրաժեշտ է բացատրել թէ ինչ բան է ոյժը, տոկունութիւնը կեանքի մէջ, թէ ինչպէս պէտք է հասկանալ այդ խօսքերը ժողովրդի, գիւղացու վերաբերութեամբ։ Կասկած չը կայ, որ ոյժ ասելով՝ պէտք է հասկանալ բարոյական ոյժ, տոկունութիւն, տոկունութիւն։ Կեանքի մէջ բարոյապէս ուժեղ կամ տոկուն կոչւում են այն մարդիկ կամ այն բնաւորութիւնները, որոնց մէջ բոլոր թէ բարոյական և թէ մտաւոր հասկացողութիւնները կազմում են մի ընդհանուր ներդաշնակ ամբողջութիւն, որոնց հոգեկան աշխարհը ազատ է ներքին հակասութիւններից, ներքին տարակուսանքներից, կասկածներից ու երկբայութիւններից։ Երբ մարդու խղճի և զգացմունքների ձայնը ներդաշնակ են գործում, երբ նրա մտքի, դատողութեան հակողութիւնը անպայման հաստատում, ամրացնում է այդ ներդաշնակութիւնը՝ այն ժամանակ մարդը դառնում է բարոյապէս մի անխորտակելի էակ, այն ժամանակ նրա բոլոր գործերը, մտածմունքները և զգացմունքները կը կատարւեն խիստ կանոնաւոր, ճիշտ և անբաժան միաւորութեամբ։ Այդ տեսակ մարդը կամ բնաւորութիւնը կոչւում է ուժեղ մարդ, ուժեղ բնաւորութիւն։ Ուժեղ այն մտքով, որ կեանքի մէջ նա միշտ կը դնայ իւր ճանապարհով։ Կեանքի՝ բոլոր արգելքները, բոլոր խոչնդոտները կը փչրւեն. կոչնչանան նրա զօրեղ և լուսաւոր բնաւորութեան առաջ։ Այսպիսի մի զօրեղ և ներդաշնակ բնաւորութիւն (гармоническая натура) Դ. Ուսպէնսկին ցոյց է տալիս մեզ իւր «Парамонъ

юродивый» անունով փոքրիկ գրուածքում, ապպիսի բնաւորութիւն նա դիտում և նկատում է նոյնպէս և բոլոր ռուս գիւղացիների մէջ՝ Ուսպէնսկին չարունակ դուրս է բերում ռուս գիւղացու այդ բնաւորութիւնը, նրա հոգեկան կեանքի ներդաշնակութիւնը, հարմոնիան, նրա թէ բարոյական և թէ տնտեսական համոյմունքների անլողդոյդ ամրութիւնը, ուժեղութիւնը։ Ռուս գիւղացին Ուսպէնսկու կարծիքով՝ նրա դիտողութիւնների և նկարագրութիւնների համաձայն, բարձր է բոլոր միւս հասարակական դասակարգերից՝ մինչև անգամ ինտելիգենցիայից ոչ թէ իւր խելքով,—դիտողութիւններից զուրկ է «խաւար» ռամիկը—այլ նա բարձր է իւր բնաւորութեան պարզութիւնով, իւր հոգեկան ներդաշնակութիւնով, իւր կեանքի ընդհանուր անկեղծ և ճշմարիտ ոգով, որին, այդ ճշմարտութիւնը, Ուսպէնսկին անուանում է правда (ոչ справедливость)։ Ահա ռուս գիւղացու կեանքի այդ ճշմարտութիւնը, այդ правда-ն է, որ կազմում է նորա բարոյական ուժը, նորա գոյութեան հաստատուն և ամուր հիմքը, նորա միակ և ամենապինդ նեցուկը՝ աշխարհիս բոլոր դառնութիւնների, վտանգների մէջ... «Մեղանում—ասում է Ուսպէնսկի».—միլիոնաւոր ամբոխը ապրում է առանց կեղծիքի, առանց ինքնախաբէութեան, ահա մեր լոյսը, մեր ապաւէնը»։ Այս մշտական և անփոփոխ յատկութիւնը, որ չարունակ երկար տարիների ընթացքում պահպանել է իւր մէջ ռուս ժողովուրդը՝ կարող է ծառայել, որպէս գրաւական՝ ապագայ յառաջադիմութեան համար, կարող է ճշմարիտ մխիթարել և ոգեորուել ամեն մի անկեղծ ժողովրդական մարդու... Մասնացոյց անելով այս յատկութեան վրայ՝ Ուսպէնսկին ամուր շեշտում է, որ ահա այդ է ռուս ժողովրդականների կարծեցեալ, երևակայական, անորոշ և անըմբռնելի «ուժը», «կորովը», որ դտանում է իրանց ժողովրդի, իրանց երկրագործ մուժիկի մէջ։ Այդ ուժը հիմայ պարզ է մեզ համար, հիմայ մենք հասկանում ենք նորա էութիւնը, հիմայ կարելի է նրան «մատով ցոյց տալ»—ասում է Ուսպէնսկին։

Ըմբռնելով և բացատրելով գիւղացու կեանքի «ուժը», ժանրամասն ցոյց տալով այդ ուժի բոլոր արտայայտութիւնները կեանքի մէջ՝ Ուսպէնսկին դարձեալ չի կանգնում այդ կէտի վրայ, դարձեալ չարունակում է իւր դիտողութիւնները, որպէս զի հասկանալ և բացատրէ թէ ինչպէս և ինչ պայմաններով է առաջացել գիւղացու այդ ուժը, ինչ բանի հետ է կապված նորա բարոյական այդ մեծ և զարմանալի տոկունութիւնը։

Դարձեալ սկսում է կեանքի մէջ խորասուզուել Ուսպէնսկին, դարձեալ ուղղում է իւր խոր հոգեբանական և տնտեսական դիտողութիւնները գիւղացու վրայ... Եւ այդ բոլոր հետազօտութիւնների, ուսումնասիրութիւնների հետևանքը եղաւ այն երևելի գրուածքը, որի անունն է Власть земли («Հողի իշխանութիւնը») և որի մէջ, նոյն իսկ վերնագրից սկսած՝ խօսում է հողի իշխանութեան, հողի ազդեցութեան, երկրագործական աշխատանքի և գիւղացու մասին։ Այդ շարադրութեան մէջ՝ Ուսպէնսկին զարմանալի խորը դի-

տողութիւններով, ապչեցնող համեմատութիւններով և օրինակներով բացատրում է՝ թէ ինչպէս հողի և առհասարակ երկրագործական աշխատանքի ազդեցութեան տակ՝ ամրացել, կազմակերպւել և ինքնաստինքեան աղնւացել է գիւղացու կեանքը. նորա բարոյական աշխարհը։ Գիւղացու հոգեկան բոլոր ոյժերը, նորա բարոյական հասատա և անվրդով համոզմունքները, նորա բոլոր զաղափարների և զգացմունքների սաստիկ անկեղծ ճշմարտութիւնը հետևանք են նորա երկրագործական պարապմունքի, նորա մշտական յարաբերութեան՝ հողի և բնութեան միւս տարրերի հետ... եւ ահա թէ ինչպէս։ Գիւղացին իւր ամբողջ կեանքում գործ է ունենում հողի, ջրի, անձրևի, քամու, ամպի, կայծակի, մէկ խօսքով բնական ոյժերի և երեոյթների հետ։ Նորա անտեսական կեանքի, նորա երջանկութեան և անբաղտութեան, ուրախութեան և վշտի դլխաւոր ֆակտորները՝ այդ բնական ոյժերը, այդ երեոյթներն են։ Երկրագործութիւնը, որ գիւղացու բոլոր զբաղմունքների և հոգսերի կենդրոնն է, լիովին կապւած է բնութեան հետ. բնութեան ոյժերը, երեոյթները և անփոփոխ մշտական օրէնքները այստեղ կատարում են ամենապլխաւոր, ճակատագրական դերը գիւղացու կեանքում։ Իւր ամբողջ երկրագործական աշխատանքի սէզոնում գիւղացին ստիպւած է դիտել նրանում կատարւող ամենահասարակ և չնչին փոփոխութիւնները և երեոյթներն անգամ։ Բնութեան մէջ կատարւող այն բոլոր փոփոխութիւնները՝ օրինակ՝ գարնան բացւելը, ձիւնի շուտ կամ ուշ հալւելը, անձրևալին եղանակները, քամիների ցուրտ կամ տաք լինելը, հողի մէջ երևցած կենդանիների, բոյսերի զանազան հիւանդութիւնները և այլն և այլն՝—որոնք համարեա բոլորովին աննկատելի, կամ անհետաքրքիր են քաղաքացու համար,—գիւղացու կեանքում նշանաւոր, աչքի ընկնող և կարևոր հանդամանքներ են կազմում։ Ո՞րքան ուրախութիւն, վիշտ, տրտմութիւն են պատճառում գիւղացուն այդ երեոյթները, որքան յոյսեր, ցանկութիւններ և իղձեր են պարունակում երկրագործի համար բնութեան այդ հասարակ և սովորական խաղերը, կապրիզները... Սկսած իւր աշխատութեան առաջի օրից, երբ գիւղացին դուրս է քշում գոմից իւր եղները և սկսում է վարել առաջին գործողութիւնը, մինչև իւր աշխատանքի վերջին պտուղների ստանալը, նա ամբողջ հոգով մտած—խորասուզւած է բնութեան մէջ, ամբողջ էութիւնով թափանցած է նորա խորը և «անքննելի» օրէնքների երեոյթների մէջ... Իւրաքանչիւր ամպի կտորը, իւրաքանչիւր անձրևի կաթիլը, արևի իւրաքանչիւր ճառագայթը, քամու փչիլը, կայծակի փայլելը... խորը հոգեկան յուզմունքներ են պատճառում գիւղացուն. նրան երբեմն ուրախացնում, ցնծութիւն են պարգևում, երբեմն յուսահատեցնում, տրտմեցնում, վշտահար են անում նրան։ Եւ այդ բոլորը կատարւում է ամեն օր, ամեն րոպէ. այդ զգացմունքներով, այդ հոգսերով և մտածմունքներով «ապրում է» գիւղացին իւր աշխատութեան բոլոր ընթացքում։

Բաւական չէ, որ գիւղացին ինքը աշխատում, արեան քրտինք է թափում, բաւական չէ, որ նա չի խնայում այդ աշխատանքի վերայ ոչ ոյժ, ոչ առողջութիւն, ոչ կեանք... այդ բոլորը բաւական չէ. հարկաւոր է, որ նորա աշխատանքը «ծլի», արդիւնք տայ երկրի երեսին, հարկաւոր է, որ իւր վարած, փորփրած, ցանած և պահած հողը բուսցնէ նորա ցորենի հասիկները։

Իսկ այդ «բուսցնելը» արդէն կախւած չէ գիւղացուց, այդ բանում գիւղացին անզօր է, ստրուկ է բնութեան ձեռքում։ Եւ ահա, իւր դաշտային բոլոր պարտականութիւնները սրբութեամբ կատարելով, իւր աշխատանքի և հարստութեան վերջին կաթիլը չանձնելով հողին, նա, այդ բաղմաչարչար երկրագործը, ընկնում է ծնկների վրայ և սկսում է աղօթել Աստուծուն՝

«Ցայտ ահա, ոտքիդ տակին փռածէ։
Քո սուրբ Աչը սրա վրայ տարածիր»։

IV

Մենք տեսանք, որ երկրագործութիւնը ստիպում է գիւղացուն ուսումնասիրել բնութեան ոյժերը, ստիպում է նրան չատ մօտիկ հոգեկան յարաբերութիւնների մէջ մտնել այդ անշունչ, անխօս-անլեզու բնութեան հետ։ Տեսանք, որ գիւղացու կեանքի երջանկութեան, կամ թշւառութեան, ուրախութեան կամ տխրութեան միակ և ամենաճիշտ բարոմէտրը դարձեալ այդ բնութիւնն է, դարձեալ նրա զանազակերպ ոյժերի փոփոխութիւններն ու երևոյթներն են։ Գտանելով բնութեան հետ այդքան քնքուշ հոգեկան յարաբերութիւնների մէջ, իւրաքանչիւր օր զգալով իւր վերայ այդ բնութեան տարրերի՝ կամ ուրախացնող կամ տխրեցնող ազդեցութիւնը, գիւղացին ալնու ամենայնիւ՝ ներքուստ, հոգեպէս համոզւած է, որ բնութիւնը, նրա ոյժերը և օրէնքները միշտ արդար, միշտ ճշմարիտ, միշտ աղնիւ և անխարուսիկ են նորա համար. նա համոզւած է, որ իւր ցանած և փայփայած արտը «չի պահելու» իւր մէջ ցորենի և դարու հատիկները, համոզւած է, որ երկինքը անշուշտ կը «պարդևէ» նրան թէ անձրև, թէ լոյս և թէ ջերմութիւն... Այդ բաներում նա իւր կերպով համոզւած է։ Նա համոզւած է նոյնպէս որ եթէ իւր ցանքը բարեյաջող լինի, այսինքն, եթէ չը պատահի որ և է դժբաղդութիւն—կարկուտ, երաշտութիւն, մորեխ (որոնք գիւղացու կարծիքով՝ դարձեալ բնութիւնից, Աստուծուց են գալիս, որպէս արդար պատիժ նորա «մեղքերի» համար...) և ուրիշ անսպասելի վտանգ՝—այն ժամանակ նա կը ստանայ իւր արդար աշխատանքի պտուղները, նա առատ հունձ կունենայ, որ կը նշանակէ՝ գիւղացու մի տարուայ կեանքը ապահովւած է, որ նա միջոց կունենայ ձմեռը հանգիստ և ուրախ լինել, միջոց կունենայ անձնատուր լինել հոգեկան բաւականութիւնների,

հարանիք անելու, իւր բարեկամներին հիւրասիրելու, քահանային «ժամոց» տալու, երեխային պատշաճաւոր կերպով մկրտելու և այլն և այլն։

Այսպիսով գիւղացու հունձքի աջողելը, որ կապած է բնութեան տարբեր ոյժերի և երեոյթների հետ, պայմանաւորում է նրա կեանքի մի չարք տնտեսական և հոգեկան յարմարութիւնները, վայելքները։ Իսկ այդ տնտեսական և հոգեկան յարմարութիւնները և վայելքները՝ կախած լինելով հունձքի յաջողելուց՝ միևնոյն ժամանակ՝ խիստ կերպով միացած են և այն բնական ոյժերի, երեոյթների ու օրէնքների հետ, որոնք առաջացնում են գիւղացու համար առատ հունձք, որոնք բուսցնում, զարգացնում և հասցնում են նրա արտը, նրա ցորենի և դարու հասկերը...

Գիւղացու և բնութեան մէջ եղած այս անխզելի տնտեսական և հոգեկան կապը, ունենում է իւր խոր, անջնջելի ճակատագրական ազդեցութիւնը գիւղացու վրայ, նրա թէ ֆիզիկական և թէ մանաւանդ հոգեկան ոյժերի վերայ։ Ապրելով միշտ բնութեան հետ, նրա գրկում, դիտելով, ուսումնասիրելով և զգալով բնութեան անփոփոխ, յաւիտենական, խելացի և արդար օրէնքները, որոնք միշտ գործում են միևնոյն կանոնաւորութիւնով, միևնոյն ճշդութեամբ՝ առանց խոտորուելու, շեղուելու իրանց բնական, սահմանած ընթացքից՝ գիւղացին բոլորովին ակամայ ենթարկւում է այդ օրէնքների և ոյժերի ազդեցութեանը, ակամայ նորա խելքը և զգացմունքները ստանում են նոյն ճշմարիտ, կանոնաւոր, խելացի և անկեղծ ուղղութիւնը, ինչ որ մենք նշմարում ենք բնութեան մէջ, նորա ոյժերի և օրէնքների մէջ։ Բնութիւնը կրթում, դաստիարակում է գիւղացուն։ Սակայն այդ կրթելու, դաստիարակելու գործողութիւնը կատարւում է բոլորովին անկախ գիւղացու ցանկութիւնից. նա ինքը ամենևին հասկացողութիւն, գաղափար էլ չունի այդ կրթութեան մասին. բնութեան, ճշմարիտ և խիստ ոյժերը, օրէնքները, երեոյթները ներշնչում են գիւղացուն՝ անկեղծ և ճշմարիտ ոգի, տալիս են նորա մտքին և զգացմունքներին կանոնաւոր, խիստ, որոշ և չափազանց պարզ, չափազանց անմեղ ուղղութիւն... Եւ գիւղացին կրելով իւր մէջ բնութիւնից ստացած այդ հոգեկան բարիքները՝ ամենևին չի էլ կարծում՝ թէ ինչ բան է այդ, ամենևին չի էլ կարծում, որ ինքը, այդ խեղճ, աղքատ և չնչին դեղջուկը,—իւր մէջ պահում է այդքան վսեմ, այդքան թանկագին հոգեկան գանձեր... Նորա բնաւորութեան անխարդախ պարզութիւնը, նորա մտաւոր և բարոյական ոյժերի սաստիկ կանոնաւոր հետեողականութիւնը, նորա զգացմունքների աշխոյժ թարմութիւնը, որ զարմանալի ներդաշնակութեամբ միացած, ամրացած են նորա մէջ՝ բնութեան զօրեղ ոյժերի ազդեցութեամբ՝—շատ նման են մի վայրենի բուսած և ծաղկած շուշանի, որ ինքն էլ չը գիտէ թէ՝ որքան չքեղ ու փարթամ են նորա ծաղիկները, որպիսի քաղցր անուշահոտութիւն են պարունակում նորա ծաղկի իւրաքանչիւր թերթիկները։ Այդ բոլորը առաջ են եկել ինքն ըստ ինքեան, ակամայ. առաջ են եկել, որով-

հետև նախախնամութեան անքննելի տնօրէնութիւնը այդպէս է կամեցել... Եւ այս է պատճառը, որ գիւղացին այնքան հաստատ, այնքան ամուր և ուժեղ է իւր հոգեկան ընդարձակութիւնների մէջ. այս է պատճառը, որ մենք հեռուից նայելով գիւղացուն՝ զարմանում, հիանում ենք նորա բարոյական ուժի, կորովի վրայ։ Այդ բարոյական ուժը, այդ կորովը բնութեան սերմանած և բուսցրած պտուղն է, դորանում իսառը չէ մարդու անկատար և թոյլ ձեռքի աշխատանքը։ Ահա այսպէս է հասկանում Գլ. Ուսպէնսկին գիւղացու բնաւորութեան առաջ գալը, այսպէս է մեկնում նա գիւղացու բարոյական ուժի և տոկունութեան կազմակերպելը։ Հողի իշխանութիւն ասելով չը պէտք է հասկանալ միայն հողը, արտը... Այստեղ միայն գլխաւոր դեր խաղացողը հողն է, որովհետև նա է կապում, ամրացնում գիւղացուն բնութեան հետ, նորա տարրերի և օրէնքների հետ։ Հողը և երկրագործական պարապմունքը երես առ երես են դնում գիւղացուն բնութեան հետ. իսկ մնացած բոլոր փոփոխութիւնները ինքնըստինքեան կատարում են՝ շատ զանազանակերպ հանգամանքներից ու պատճառներից դրդուած։

V

Ուրեմն պարզ է հողի, երկրագործական պարապմունքի նշանակութիւնը գիւղացու համար։ Հողը հարկաւոր է գիւղացուն՝ ոչ միայն իբրև տնտեսական ֆակտոր, այլև իբրև բարոյական, դաստիարակչական միջոց, իբրև մի «դպրոց», որտեղ սերնդաբար կրթւում, աղնւանում է իւր մտաւոր և բարոյական ուժը, կարողութիւնը։ Եւ այս է պատճառը, որ ամեն տեղ և ամեն ժամանակ՝ գիւղացին այնքան սերտ, իդէալական կապերով միացած է իւր ցանած, մշակած հողի հետ, որ նա երբէք չի համաձայնի բաժանուել իւր հողից ու եթէ, դանդաղ ստիպող հանգամանքներից ճնշուած՝ բաժանուի էլ,—այդ բաժանումը շատ ծանր կը լինի նրա համար... Ես այդ ասում եմ, առհասարակ՝ ամեն երկրի գիւղացու համար, որովհետև հողի և գիւղացու մէջ եղած կապը ընդհանուր է, ամեն տեղի, ամեն ազգութեան համար։ Գիւղացին ամեն տեղ գիւղացի է, հողի և առհասարակ բնութեան ազդեցութիւնը ամեն տեղ միևնոյն է երկրագործի վերաբերութեամբ։ Այս կարծիքի հետ համաձայն է և Ուսպէնսկին։

Ես խնդրում եմ ընթերցողից չը շփոթել՝ գիւղացու բնաւորութիւնը, նորա ընդհանուր բարոյական կաղմը (нравственный складъ), նորա ունեցած քաղաքական սովորութիւնների և գաղափարների հետ։ Ֆրանսիացի երկրագործ—գիւղացին՝ իւր ընտանեկան, հասարակական սովորութիւններով ու գաղափարներով 'ի հարկէ տարբերւում է օր. հայ գիւղացուց։ Բայց մեր խօսքը այստեղ գաղափարների ու սովորութիւնների վրայ խօսչէ. մեր խօսքը գիւղացու հոգեկան ուժի մասին է, նորա մտաւոր—բարոյական ամրութեան, անկեղծութեան, ներդաշնակութեան վրայ է։ Այդ

կողմից՝ թէ ֆրանսիացի թէ գերմանացի, թէ ռուս, թէ հայ և թէ առ-
հասարակ ամեն տեղացի, երկրագործ—գիւղացիներ բոլորովին նման են
իրար։ Նման են, որովհետև նրանք բոլորն էլ միևնոյն պայմանների, միև-
նոյն ոյժերի և օրէնքների ազդեցութեան տակ են դատապարտված. միև-
նոյն հողը, ջուրը, օդը, անտառը, արևը, քամին, անձրևը՝ իրանց անփո-
փոխ ոյժերով, լատկութիւններով ու երևոյթներով չրջապատում են ամեն
տեղի և ազգութեան պատկանող երկրագործին, նորա աշխատանքի ժա-
մանակ, նորա կեանքի բոլոր հոգսերի և զբաղմունքների ժամանակ։ Ես
դարձեալ կրկնում եմ՝ հողը լոկ նիւթական ապրուստի համար չէ պէտք
գիւղացուն. գիւղացին, որ այնքան կապված է իւր հողի հետ, լոկ տնտ-
եսական հաշիւներով ու դատողութիւններով չէ առաջնորդված այդ բա-
նում։ Իբրև ապացոյց, թէ որ աստիճան դժուար է գիւղացու համար բա-
ժանվել հողից, և թէ որքան թանդ է նստում նորա վրայ այդ բաժանումը.
ես դարձեալ մատնացոյց եմ անում Գլ. Ուսպենսկու բազմաթիւ նկարա-
գրութիւնների ու պատկերների վրայ, որոնց մէջ հիանալի ճշտութեամբ
գուրս է բերված ռուս գիւղացու բարոյական պատկերը հողից դուրս,
երկրագործութեան ազդեցութիւնից հեռու։ Տնտեսական սաստիկ նեղ հան-
գամանքները ստիպում են ռուս գիւղացուն թողնել հողը և գնալ քաղաք,
գնալ մօտակայ գործարանը կամ երկաթուղու կայարանը զորձ ճարելու,
փող աշխատելու։ Քիչ դժուարութիւններից լիտոյ այդ բանը աջողւում է
գիւղացուն։ Սկզբում կարծես թէ նա չատ բաւական է իւր դրութիւնից,
փողի համեմատական առատութիւնը, կեանքի զանազանակերպութիւնը,
դեկորացիայի նման չուտ չուտ փոխվող հանգամանքները... այդ բոլորը մի
առժամանակ գրաւում, շլացնում են գիւղացուն։ Բայց նա շուտով է հիաս-
թափվում այդ բաներից. քաղաքային կեանքի ցեխը և ապականութիւնը
սկսում է քիչ քիչ անտանելի դարձնել նորա համար նոր կեանքը, նա
սրտանց էլի դառնում է դէպի գիւղ, էլի սկսում է մտաբերել իւր հողը,
եղները, արտը և արօրը։ Այս նոր հանգամանքների մէջ գիւղացին սկսում
է որոնել իւր առաջուայ հոգեկան մաքրութիւնը, անարատութիւնը, իւր
մտաւոր և բարոյական հարմոնիան. նա սկսում է տանջվել հոգեպէս,
սկսում է տխրել, մտածել, երևակայել... Եւ այդ նորա հոգեկան տանջանք-
ները առաջ են գալիս միայն նորանից, որ գիւղացին իւր նոր կեանքի
մէջ չի գտնում այն կենսական ընդհանուր ճշմարտութիւնը, այն անկեղծ
և պարզ առաքինութիւնը, որով նա սնվել, դաստիարակվել մեծացել է,
որի մէջ նա ամրացրել, կազդուրել է իւր մաքի և հոգու բոլոր ոյժերը։
Նոյն բանը կարելի է նշմարել և հայ գիւղացու մէջ՝ երբ նա թողնելով
գիւղը, գալիս է Թիֆլիս, Բագու, Բաթում և այլ աւելորական կենդրոն-
ները՝ փող դատելու։ «Հայ գիւղացու սև օրը»... Այս խօսքերը զատարկ խօսքեր
չեն. սրանք կենսական—ճակատագրական միտք ունեն հայ գիւղացու համար։
Ափսոս, որ պ. Սելիք-Շահնազարեանը իւր այդ գեղեցիկ պատկերի մէջ

համարեա ուշադրութիւն չէ դարձրել Բաքուում աշխատող պանդուխտ գիւղացիների հոգեկան աւելի խոր, աւելի աղնիւ փոթորիկների և կռիւների վրայ։ Բաղուի գործարանում աշխատող, մշակութիւն անող հայ գիւղացու թշուառութիւնը, նորա «սև օրը» առաջ է գալիս ոչ թէ նրանից, որ այդ գիւղացիները հեռացած են իրանց ընտանիքից, իրանց բարեկամներից և աղդականներից. այդ դեռ այնքան մեծ թշուառութիւն չէ։ Գլխաւոր թշուառութիւնը նրանումն է, որ հայ գիւղացին. իւր պանդխտութեան մէջ, իւր այդ նոր կեանքում՝ կորցրել է իւր առաջուայ պարզ, առաքինի և անկեղծ կեանքի թելը, որ այստեղ նա տանջւում է բարոյապէս, նա իւր խղճի, իւր բարոյական զգացմունքների կորուստն է ողբում... Այս կէտի վրայ պէտք է առանձին և խոր ուշադրութիւն դարձնել։ Ի հարկէ ոդէտ և անուսում գիւղացին չը դիտէ արտայայտել իւր այդ հոգեկան անբաւականութիւնը՝ մեղ ամէնիս հասկանալի ձեով ու եղանակով. նա ինքն էլ չի հասկանում իսկապէս՝ թէ ինչ է իւր տխրութեան բուն պատճառը։ Միայն նա զդում է, օրդանական կերպով զդում է, որ այդ կեանքը, այդ քաղաքային խառնակ, անկանոն, ապականւած կեանքը «անարդար», մոլորեցնող կեանք է, նորա կանոնները, սովորութիւնները և ա դ ա թ ն ե ր ը «Աստուծուն հաճելի չեն»,—не по-божески,—ինչպէս ասում է Ուսպէնսկին։ Խօսեցէք փորձի համար, Թիֆլիզի, Բաղուի, Կոստանդինապոլսի և այլ գլխաւոր կենդրոնների աշխատաւոր մշոկ հայերի հետ. հարցրէք նրանց կեանքի, ապրուստի մասին,—և զուք կը նկատէք, որ պանդուխտ գիւղացին մի քանի խօսքից յետոյ՝ մտաբերից իւր գիւղը, իւր երկրի «հողն ու ջուրը», իւր մամլաքեաթը, իւր զութանը, իւր եղները, իւր կնոջը, զաւակներին և այլն և այլն, մէկ խօսքով գիւղի երկրագործական կեանքը՝ իւր բոլոր մանր ու խոշոր պարագաներով։ Եւ ամենից հետաքրքիրն այն է, որ նա հաւասարաչափ սիրում է ամեն բան, ինչ որ գիւղին է վերաբերում, ինչ որ կապւած է երկրագործութեան հետ։ Սիրելով հողը, երկրագործութիւնը՝ գիւղացին միևնոյն ժամանակ՝ ամենաքնքուշ զգացմունք է տածում և դէպի այն բոլոր առարկաները, որոնք օգնում, նպաստում են նրան իւր աշխատանքի մէջ, որոնք մասնակցում են նորա ոուրբ և աղնիւ գործին։ Որքան անկեղծ և սրտաշարժ է գիւղացու սէրը՝ դէպի պառաւած ամակտար եղը, որ այնպէս գեղեցիկ դուրս է բերւած «Մինասի եղը» վերնագրով հիանալի պատկերի մէջ (Տես «Մուրճ» № 1, 1891 թ.)։ Եթէ ընթերցողը չէ կարդացել՝ թող կարդա պ. Ա. Նամալեանի այդ փոքրիկ պատմութիւնը. թող կարդա և համոզւի՝ որ հայ գիւղացին, իրաւ, գիտէ սիրել իւր աշխատանքը, դիտէ իդէալականացնել այդ աշխատանքի հերոս՝ եղանը՝

Ես մատաղ եմ եղանը՝
Որ կը պահի խիղանը.
Աստուած էլի ղրաթ տայ՝
Մեր տնարար եղանը։

Ապա՝ է գովում հայ գիւղացին իւր եղանը, և ով կարող է կասկածել, որ այդ խօսքերը արտայայտում են գիւղացու ամենաջերմ և անկեղծ սիրոյ զգացմունքը՝ դէպի իւր աշխատանքի ընկերը, դէպի իւր ամենամօտ և հաւատարիմ բարեկամը... Ա. Նամալեանի գրած այդ պատկերը՝—«Մինասի եզը» մի փոքրիկ, բայց թանկագին ակն է մեր հայ գիւղացու կեանքին վերաբերեալ գրականութեան մէջ, մի այնպիսի ակն, որ իւր մէջ ցոլացնում է ամբողջ ժողովրդի, երկրագործ ժողովրդի՝ հոգեկան աշխարհը, նորա բարոյական ազնիւ և անխարդախ կեանքի ճշմարիտ, խակական գոյները, այնպէս, ինչպէս, որ փոքրիկ ադամանդը ցոլացնում է իւր մէջ ամբողջ արեգակի պատկերը։